ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/7259/02/24 ք. Երևան
19 Դեկտեմբերի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով, ըստ հայցի «Սեյսմշին» ՍՊԸ-ի, «Ճին նախագիծ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվորներ) ընդդեմ «Հայաստանի տարածքային զարգացման» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատասխանող), երրորդ անձինք՝ «Տեկտոնիկա» ՍՊԸ-ի, «Արամե» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Երրորդ անձինք)՝ գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրության 1.3 կետում լրացում կատարելուն, կոնսորցիումի հայտը բավարար գնահատելուն պարտավորեցնելու, թիվ 5 արձանագրության 3-րդ կետի 3.2-րդ ենթակետով և կ-րդ կետով կայացված որոշումներն անվավեր ճանաչելու, անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ «Հայաստանի տարածքային զարգացման» հիմնադրամի, երրորդ

անձինք՝ «Տեկտոնիկա» ՍՊԸ-ի, «Արամե» ՍՊԸ-ի՝ խնդրելով՝

1. պարտավորեցնել Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամին գնահատող հանձնաժողովի 16.08.2024թ. սկսված և 21.08.2024թ. ավարտված թիվ 5 արձանագրության 1.3 կետում կատարել լրացում, հետևյալ բովանդակությամբ՝ «Մ-Բիլդ» ՍՊԸ-ի և Անդրանիկ Վլադիմիր Սիմոնյանի միջև աշխատանքային պայմանագիրը կնքվել է 06.02.2017թ, սակայն «Մ-Բիլդ» ՍՊԸ-ն գրանցվել է 15.06.2017թ, ավելին՝ աշխատանքային պայմանագիրը կնքվել է 06.02.2017թ., սակայն պայմանագրում նշվել է Անդրանիկ Ղուկասյանի 04.05.2018թ. տրված թիվ «AR 00671919» սերիայով անձնագիր,

2. անվավեր ճանաչել գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրության 3-րդ կետի 3.2-րդ ենթակետով կայացված որոշումը և որպես հետևանք անվավեր ճանաչել նաև նույն արձանագրության 5.2 կետով կայացված որոշումը,

3. անվավեր ճանաչել գնահատող հանձնաժողովի թիվ 5-րդ արձանագրության 4-րդ կետով կայացված որոշումը և որպես անվավերության հետևանք անվավեր ճանաչել նաև գնահատող հանձնաժողովի թիվ 5-րդ արձանագրության 5.1 կետով կայացված որոշումը,

4. պարտավորեցնել Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամին թիվ ՀՏԶՀՎՉԱՓ-ԽԲՄ-ԾԶԲ-2024/4 ծածկագրով բաց մրցույթ շրջանակում որոշում կայացնել «Սեյսմշին» ՍՊԸ և «Շին նախագիծ» ՍՊԸ կոնսորցիումի հայտը բավարար գնահատելու մասին:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգի միջոցով դատարան ներկայացվել է 01.09.2024 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/7259/02/24 քաղաքացիական գործը, որը մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Շիլաջյանին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Ա. Շիլաջյան) 05.09.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցվորների ներկայացուցչի կողմից 17.09.2024 թվականին ներկայացվել է վերաքննիչ բողոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Ա. Շիլաջյան) 05.09.2024 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշման դեմ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.10.2024 թվականի որոշմամբ թիվ ԵԴ2/7259/02/24 քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» 05.09.2024թ. որոշումը վերացվել է:

Թիվ ԵԴ2/7259/02/24 քաղաքացիական գործը 06.12.2024 թվականին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Շիլաջյանին:

13.12.2024 թվականին կատարվել է թիվ ԵԴ2/7259/02/24 քաղաքացիական գործի վերաբաշխում՝ դատավոր Ա. Շիլաջյանի՝ անաշխատունակության մեջ գտնվելու հանգամանքով պայմանավորված:

Թիվ ԵԴ2/7259/02/24 քաղաքացիական գործը 13.12.2024 թվականին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանին:

16.12.2024 թվականին կատարվել է թիվ ԵԴ2/7259/02/24 քաղաքացիական գործի վերաբաշխում՝ դատավոր Գ. Վարդանյանի՝ արձակուրդում գտնվելու հանգամանքով պայմանավորված:

Թիվ ԵԴ2/7259/02/24 քաղաքացիական գործը **մակագրվել** և **հասանելի է** դարձել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին **16.12.2024 թվականին**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, Դատարանը գտնում է, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն գլխի նորմերը տարածվում են էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով դատարանի և դատավարության մասնակիցների, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ անձանց կողմից իրականացվող գործողությունների վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ Համակարգն օգտագործող անձ է (են) համարվում՝ իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, **գնումների հետ կապված վեճերով վարույթում պատասխանողները**, ներկայացուցիչ հանդիսացող փաստաբանները, սնանկության գործով կառավարիչները, նոտարները և արտոնագրված հաշտարարները՝ **անկախ Համակարգի միջոցով որևէ անգամ որևէ գործողություն կատարած լինելուց կամ չլինելուց**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բոլոր դատավարական փաստաթղթերը (հայցադիմում, դիմում, բողոք, պատասխան, դիրքորոշում, միջնորդություն և այլն) կազմվում և **ներկայացվում են Համակարգի միջոցով**՝ Համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին և առաջադրվող պահանջներին

համապատասխան, **բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների, որոնք ներկայացվում են միայն նյութական եղանակով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր ապացույցները ներկայացվում են դրանք սույն օրենսգրքով նախատեսված դատավարական փաստաթղթերին կցելու և **Համակարգով ուղարկելու միջոցով**:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ պատասխանող «Հայաստանի տարածքային զարգացման» հիմնադրամից պետք է պահանջել «ՀՏՁՀ-ՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/4» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **Էլեկտրոնային համակարգի միջոցով** (**բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ, 124-րդ, 199-րդ և 200-րդ, 234.6-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Սեյսմշին» ՍՊԸ-ի, «Ծին նախագիծ» ՍՊԸ-ի ընդդեմ «Հայաստանի տարածքային զարգացման» հիմնադրամի, երրորդ անձինք՝ «Տեկտոնիկա» ՍՊԸ-ի, «Արամե» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Երրորդ անձինք)՝ գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրության 1.3 կետում լրացում կատարելուն, կոնսորցիումի հայտը բավարար գնահատելուն պարտավորեցնելու, թիվ 5 արձանագրության 3-րդ կետի 3.2-րդ ենթակետով և կ-րդ կետով կայացված որոշումներն անվավեր ճանաչելու, անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:
2. «Հայաստանի տարածքային զարգացման» հիմնադրամից պահանջել դատարան ներկայացնել «ՀՏՁՀ-ՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/4» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **Էլեկտրոնային համակարգի միջոցով** (**բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):
3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող «Հայաստանի տարածքային զարգացման» հիմնադրամի կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ **հնգօրյա ժամկետում**:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Digitally signed by YERITSYAN SARGIS 3207830072 Date: 2024.12.19 13:58:46 AMT **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am